

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2021 թվականի
հուլիսի 7- ի կայացած գիտխորհրդի նիստի

Օրակարգում՝

1. 2020-21 ուստարվա 2-րդ կիսամյակի արդյունքների ամփոփում:
2. Մագիստրատուրայի ընդունելության մասին:
3. Ասպիրանտուրայի ընդունելության մասին:
4. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի արդյունքների ամփոփման հարցը: Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ծառայած խնդիրները, կապված հեռավար ուսուցման հետ: Նշվեց, որ ուսանողները դժվարանում են իրենց գիտելիքները ապահովել, քանի որ դասապրոցեսի ժամանակ ունենում են խնդիրներ, պայմանավորված ինտերնետի, տեխնիկական միջոցների հետ: Եթե դասընթացները շարունակվեն առցանց, ապա կարիք կա վերանայել և հստակեցնել դասապրոցեսը, քանի որ ուսանողների որոշ հատված գոհ չեն իրենց գնահատականներից: Ա.Բաղդասարյանը նշեց, որ դասավանդող դասախոսները հմուտ են, բալանսը պահպանվում է: Օբյեկտիվ գնահատվել են նաև ավարտական աշխատանքները: Անհրաժեշտ է, որ ավարտական կուրսի ուսանողները հստակ իմանան այն ձևաչափերը, որով գնահատվում է իրենց աշխատանքը: Որպես առավելություն, Ա.Բաղդասարյանը նշեց, որ ֆակուլտետի դասախոսական անձնակազմը հարցումների ընթացքում՝ անգամ առցանց դասավանդման պայմաններում, ստացել է բարձր գնահատական ուսանողների կողմից, ինչպես մասնագիտական, այնպես էլ ոչ մասնագիտան ֆակուլտետներում: Հարցի կապակցությամբ արտահայտվեց Հ.Հովհաննիսյանը, նշելով առցանց ուսուցման դրական ազդեցությունը նորանոր տեխնոլոգիաների տիրապետումը ուսանողների կողմից: Նշվեցին նաև ֆակուլտետի 4 դասախոսների անունները, ովքեր մասնակցել էին ԵՊՀ լավագույն դասախոս մրցույթին:

Դասախոսությունների ձայնագրությունները կլրացնեն համալսարանի ոսկե ֆոնդը, ավելացրեց Ա. Բաղդասարյանը:

2. Լսեցին առաջին հայտով մագիստրատուրա դիմորդների հարցը: Ա.Բաղդասարյանը ներկայացրեց դիմորդների քանակը, ծրագրերի գրավչությունը, առաջարկեց բակալավրիատի ավարտական կուրսի ուսանողներին օգնել մասնագիտական կողմնորոշման հարցում, կրթությունը շարունակելու նպատակով:
3. Անդրադառնալով օրակարգի 3-րդ հարցին, Ա.Բաղդասարյանը նշեց, որ կան խնդիրներ, և որպեսզի մենք չկորցնենք հատկացված տեղը, անհրաժեշտ է ուսման ընթացքում ևս ուղղորդել ուսանողներին: Կան փոփոխություններ, կապված ապագա ասպիրանտներին ներկայացվող պահանջներում, ինչպես նաև ղեկավարներին: Այդ կակոնակարգը փոխանցվել է ամբիոններ: Հ.Ավանեսյանը նշեց, որ ամբիոննում այն ընթացքի մեջ է և քննարկվել է:

4. Ինչ վերաբերում է ընթացիք հարցերին, ապա.


- ներկայացվեց Հ.Ավանեսյանի կողմից «Փորձարարական հոգեբանություն» ձեռնարկի վերահրատարակման հարցը, որը աջաջին անգամ տպագրվել էր 2010 թվականին: Նոր ձեռնարկը համալրվել է նյութերով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել վերահրատարակման հարցը:

- ինչ վերաբերում է մրցույթ անցած դասախոսներին, ապա հրամանները հավանական է կլինի հոգաբարձուների խորհրդի ձևվորումից հետո:
- Ֆակուլտետից Ա.Բաղդասարյանը և Հ.Ավանեսյանը համալսարանի այլ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի հետ մասնակցեցին Արցախում «Հետպատերազմյան սինդրոմ» խորագրով հանդիպմանը: Հ.Ավանեսյանը նշեց, որ շառ հազեցած հանդիպումներ են ունեցել դասախոսների, ռազմական անձնակազմի, ծառայողների հետ, որտեղ ներկա էին, գիտության և կրթության նախարարը: Այդ հանդիպումները պետք է լինեն շարունակական:
- ֆակուլտետում կազմակերպվել է 3 օրյա հանդիպում Մարիամ Վանունցի հետ, ով իր փորձն է տարածում տրավմաների հետ աշխատանքներում՝ ներկայացնելով նորանոր տեխնիկաներ:

- Ա.Ոսկանյանի կողմից կազմակերպվել է սեմինար համալսարանական կրթության վերաբերյալ:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան



Նիստի քարտուղար՝ Վ. Պապոյան